



## II. ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

4. Ավարտական աշխատանքը բակալավրի կրթական ծրագրի ամփոփիչ բաղադրիչն է, վերլուծական, կիրառական, մեթոդական նշանակության ինքնուրույն հետազոտական աշխատանք, որը նպաստում է ՀՀ-ի Որակավորումների ազգային շրջանակի 6-րդ մակարդակի, ինչպես նաև ոլորտային շրջանակի բակալավրի աստիճանի բնութագրիչների, մասնագիտական կրթության համապատասխան ծրագրով նախատեսված կրթական ելքային արդյունքների ձեռքբերմանը: Այն արտացոլում է տվյալ մասնագիտական ոլորտում ուսանողի ձեռքբերած գիտելիքները կիրառելու, վերլուծելու, ուսումնասիրություն կատարելու և ներկայացնելու կարողությունները, մասնագիտական խնդիրների լուծումներ առաջադրելու հմտությունները:

5. Ավարտական աշխատանքի թեմայի արդիականության, մասնագիտական կրթական ծրագրին նրա համապատասխանության, կատարման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար պատասխանատու է թողարկող ամբիոնը և ավարտական աշխատանքի ղեկավարը, իսկ շարադրված բոլոր տեսակետների, ներկայացված տվյալների ճշգրտության համար պատասխանատու է ուսանողը՝ ավարտական աշխատանքի հեղինակը:

6. Ավարտական աշխատանքի բովանդակության, կառուցվածքի, ներկայացման ձևի և ծավալի վերաբերյալ պարտադիր պահանջները սահմանվում են սույն կարգով:

7. Ավարտական աշխատանքի նպատակներն են՝

7.1. մասնագիտական տեսական գիտելիքների ամրապնդում և համակարգում, մասնագիտական խնդիրները լուծելիս այդ գիտելիքները գործնականում կիրառելու կարողությունների ձևավորում,

7.2. մասնագիտական գործունեության ոլորտում խնդիրներ վերհանելու, դրանք ուսումնասիրելու կարողության ձևավորում,

7.3. հետազոտական, նախագծային աշխատանք կատարելու և մեթոդական կարողությունների ձևավորում,

7.4. մեթոդական աշխատանքի, ուսումնասիրության արդյունքների ներկայացման կարողությունների ձևավորում:

## III. ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԹԵՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

8. Ավարտական աշխատանքի թեման կարող է առաջարկվել ինչպես ուսանողի, այնպես

էլ համապատասխան մասնագիտական կրթական ծրագիրն իրականացնող ամբիոնի կողմից:

9. Ավարտական աշխատանքի թեման հաստատվում է մասնագիտական կրթական ծրագիրն իրականացնող ամբիոնի կողմից՝ առկա ուսուցման համակարգում մինչև տվյալ ուսումնական տարվա սեպտեմբերի 30-ը, իսկ հեռակա ուսուցման համակարգում՝ նոյեմբերի 30-ը: Այնուհետև հինգ աշխատանքային օրվա ընթացքում ամբիոնը թեմաները ներկայացնում է համապատասխան ֆակուլտետային խորհուրդ: Հաստատված թեմաները համապատասխան ֆակուլտետների կողմից գրանցվում են ՀՊՄՀ-ի [www.ams.aspu.am](http://www.ams.aspu.am) ուսումնական գործընթացի ավտոմատ կառավարման համակարգում: Թեմաների վերջնական հաստատման համար ձևավորվում է համալսարանական մեթոդական խորհուրդ, որի դիտարկմամբ թեման կարող է հաստատվել, ուղարկվել խմբագրման կամ ամբողջական փոփոխման:

10. Ավարտական աշխատանքի թեման կարող է խմբագրվել մինչև ավարտական կիսամյակի մեկնարկը, եթե առկա է կրթական ծրագիրն իրականացնող ամբիոնի համապատասխան հիմնավորումը:

11. Ավարտական աշխատանքի թեման ընտրելիս անհրաժեշտ է առաջնորդվել հետևյալ դրույթներով՝

11.1. թեմայի արդիականությունը,

11.2. թեմայի/հիմնախնդրի համապատասխանությունը մասնագիտական կրթական ծրագրի բովանդակությանը,

11.3. թեմայի/հիմնախնդրի կիրառական, մեթոդական, հետազոտական բնույթը:

#### IV. ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

12. Ավարտական աշխատանք ղեկավարում է մասնագիտական կրթական ծրագրի ուղղությանը համապատասխան գիտական աստիճան ն/կամ կոչում ունեցող ՀՊՄՀ-ի մասնագետը:

13. Առանձին դեպքերում, օրինակ՝ արվեստի մասնագիտությունների դեպքում ավարտական աշխատանք կարող է ղեկավարել համապատասխան ոլորտում փորձագիտական հեղինակություն, ճանաչում ունեցող ՀՊՄՀ-ի կամ այլ հաստատության գիտական աստիճան, կոչում չունեցող մասնագետը:

14. Ավարտական աշխատանքի ղեկավարը՝

14.1. իրականացնում է խորհրդատվություն ավարտական աշխատանքի թեմայի ընտրության վերաբերյալ,

14.2. աջակցում է ավարտական աշխատանքի պատրաստման աշխատանքային պլան-

ժամանակացույցի, դրան համապատասխան առաջադրանքների կազմման և իրականացման աշխատանքներում,

14.3. կատարում է թեմային առնչվող աղբյուրների ընտրության և օգտագործման վերաբերյալ առաջարկություններ,

14.4. իրականացնում է ավարտական աշխատանքի կատարման ժամանակացույցի հսկողություն,

14.5. ամբիոնի նիստերում տեղեկատվություն է ներկայացնում ավարտական աշխատանքի իրականացման ընթացքի և ժամկետների պահպանման վերաբերյալ,

14.6. իրականացնում է խորհրդատվություն ավարտական աշխատանքի պաշտպանության գործընթացի և ուսանողի պաշտպանական խոսքի պատրաստման վերաբերյալ,

14.7. ուսանողին տրամադրում է տեղեկատվություն սույն կարգի դրույթների, պահանջների, ավարտական աշխատանքի գնահատման բաղադրիչների, չափանիշների վերաբերյալ,

14.8. գրավոր ներկայացնում է «Ղեկավարի կարծիք» (Հավելված 3):

**V. ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

15. Ավարտական աշխատանքի կառուցվածքային տարրերը, դրանց բովանդակության վերաբերյալ պահանջները և ծավալները ներկայացված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1.

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԱՐՐԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ	ԾԱՎԱԼԸ (ԲԱՌԵՐԻ ՔԱՆԱԿՈՎ)
<b>ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ</b>	Տիտղոսաթերթը սույն կարգի պահանջներով կառուցված առաջին էջն է, որն ունի տեղեկատվական բնույթ:	Հավելված 1.
<b>ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ</b>	Հերթականությամբ ներկայացվում են ավարտական աշխատանքի կառուցվածքային բոլոր տարրերը (ներառյալ՝ հավելվածները) և դրանց համապատասխան էջերը:	
<b>ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ ԵՎ ԲԱՆԱԼԻ ԲԱՌԵՐ ՈՒ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	Համառոտագիրը պետք է լինի հակիրճ, բայց ամբողջական նկարագրություն աշխատանքի բովանդակության մասին: Այն պետք է ընդգրկի աշխատանքի հիմնական նպատակը, կիրառված մեթոդաբանությունը, ստացված	250-300 բառ

	<p>արդյունքները և հիմնական եզրակացությունները:          Համառոտագիրը պետք է լինի ինքնուրույն և ընթերցողին տրամադրի աշխատանքի էական բովանդակության համառոտ ըմբռնում՝ առանց լրացուցիչ փաստաթղթերի անհրաժեշտության:          Այն պետք է լինի հստակ և ակադեմիական ոճով գրված, առանց ավելորդ մանրամասների, բայց ընդգրկի բոլոր կարևորագույն տարրերը:          Բանալի բառերը և արտահայտությունները պետք է լինեն հստակ, թեմային խիստ առնչվող 8-10 բառ:</p>	
<p><b>ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ԽՈՍՔ</b></p>	<p>Հակիրճ ներկայացվում է շնորհակալություն բոլոր նրանց, ովքեր աջակցել են հետազոտության իրականացմանը: Դրա մեջ կարելի է ներառել գիտական ղեկավարին, դասախոսներին, ընկերներին կամ այլ անձանց, որոնք նպաստել են հետազոտության հաջող ավարտին:</p>	<p>առավելագույնը 100 բառ</p>
<p><b>ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ</b></p>	<p><b>Հիմնախնդրի սահմանում, արդիականություն</b>          Ահրաժեշտ է սահմանել հիմնախնդիրը: Երկու կամ երեք կետով պետք է հստակ հիմնավորել ընտրված թեմայի, հիմնախնդրի արդիականությունը, հրատապությունը կրթության, հասարակության, մանկավարժական գիտության կամ պրակտիկայի համար:          Այս բաժնում պետք է մանրամասն ներկայացվի, թե ինչու է հետազոտությունը կարևոր:          Անհրաժեշտ է նշել, թե ինչպես է այն օգնելու ոլորտին, ովքեր են շահառուները, և ինչ կիրառական կամ գիտական նշանակություն կունենան արդյունքները:   <b>Հետազոտության նպատակը</b>          Ավարտական աշխատանքի նպատակը պետք է բովանդակի տվյալ թեմայով ավարտական աշխատանքի</p>	<p>800–1000 բառ</p>

	<p>կատարման վերջում ձեռք բերվող արդյունքը, որին ցանկանում եք հասնել աշխատանքի շնորհիվ: Ձևակերպված նպատակը պետք է լինի հստակ, հասկանալի, ցանկալի արդյունքը նկարագրող, իրատեսական, հասանելի, մատչելի, կոնկրետ, ստուգվող կամ դիագնոստիկայի տրվող (SMART):</p>	
<p align="center"><b>ԳԼՈՒԽ 1. ՀԻՄՆԱԽՆՂԻԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳԻՏԱԿԱՆ ԱՂՔՅՈՒՐՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ</b></p>	<p>Գրականության և առնչվող հետազոտությունների վերլուծության գլուխը պետք է սկսվի համառոտ ներածությամբ, որտեղ ներկայացվում են հետազոտության թեմայի շրջանակներում գրականության վերլուծության նպատակը, ծավալը և կառուցվածքը: Այնուհետև ենթագլուխներում քննարկվում են թեմային (հիմնախնդրին) առնչվող տեսական հիմքերը, տեսությունները, հիմնական հասկացությունները, տարբեր հեղինակների մեկնաբանությունները, էմպիրիկ հետազոտությունները, դրանց համեմատություններն ու բացերը: Անհրաժեշտ է անդրադառնալ գրականության բացերին՝ ընդգծելով հիմնախնդրի չլուծված խնդիրները և դրանց կապը ընթացիկ հետազոտության հետ, ինչպես նաև վերջին զարգացումներն ու նորարարությունները:</p> <p>Գլուխը եզրափակվում է կարճ ամփոփումով, որտեղ ներկայացվում են վերլուծության հիմնական կետերը, բացերը և դրանց կարևորությունը, ևս մեկ անգամ հիմնավորվում է աշխատանքի նպատակն ու հետազոտական հարցը, ինչպես նաև տրամադրվում է անցում դեպի 2-րդ՝ մեթոդաբանության գլուխ:</p> <p><b>Հետազոտության/ուսումնասիրության հարց</b></p> <p>Հետազոտական հարցը պետք է լինի հստակ ձևակերպված և ուղղված հետազոտության նպատակին: Այն պետք է լինի չափելի, հասկանալի և իրագործելի, ինչը հնարավորություն</p>	<p align="center">1000-1200 բառ</p>

	կտա համակարգված կերպով ուղղորդել տվյալների հավաքագրումն ու վերլուծությունը:	
<p align="center"><b>ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԸՆԹԱՑՔ</b></p>	<p>Այս գլուխը ներկայացնում է հետազոտության իրականացման համար կիրառված մեթոդները, տվյալների հավաքագրումը և վերլուծությունը՝ ապահովելով հետազոտության հուսալիությունը և վավերականությունը: Գլուխը սկսվում է այս բաժնի նպատակի նկարագրությամբ, այնուհետև անդրադառնում է տվյալների հավաքագրման համար հարցադրումներին: Տվյալների վերլուծության բաժնում նկարագրվում են կիրառված մեթոդները և գործիքները ցույց տալով, թե ինչպե՞ս են վերլուծությունները պատասխանում հետազոտության հարցին:</p>	<p align="center">800–1000 բառ</p>
<p align="center"><b>ԳԼՈՒԽ 3. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ</b></p>	<p>Այս գլուխը ներկայացնում է հետազոտության արդյունքները տրամաբանական և հստակ կառուցվածքով, որպեսզի ընթերցողը, ներառյալ նրանք, ովքեր կարող են անցնել ուղղակի այս գլխին առանց նախորդ գլուխները կարդալու, կարողանան հեշտությամբ ըմբռնել աշխատանքի բովանդակությունը: Գլուխը սկսվում է ներածական պարբերությամբ, որը ներկայացնում է այս բաժնի նպատակը, ընդգծում է հետազոտության հիմնական արդյունքները: Արդյունքները ներկայացվում են համակարգված, կարող են ուղեկցվել լուսանկարներով, աղյուսակներով և գծապատկերներով՝ տվյալների հստակության և մատչելիության ապահովման համար: Գլուխը եզրափակվում է արդյունքների ամփոփումով, որը միավորում է հիմնական բացահայտումները, ընդգծում է նկատված միտումները կամ բացառությունները և ապահովում է անցում դեպի հաջորդ գլուխ, որտեղ կքննարկվեն և կմեկնաբանվեն դրանք:</p>	<p align="center">800- 1200 բառ</p>

	<p><b>Հետազոտության սահմանափակումները</b></p> <p>Սահմանափակումների բաժնում նշվում են հետազոտության շրջանակները, ներառյալ այն, ինչ դուրս է մնում դրա շրջանակներից, ինչպես նաև այն գործոնները, որոնք կարող են ազդել արդյունքների վրա, խոչընդոտել կամ սահմանափակել աշխատանքի ամբողջականության մեջ բացահայտվող հարցերի լուծումը:</p>	
<p><b>ԱՄՓՈՓՈՒՄ, ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՔՆՆԱՐԿՈՒՄ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b></p>	<p>Այս բաժինը ներկայացնում է ուսումնասիրության վերջնական արդյունքները՝ համատեղելով հիմնական բացահայտումները, դրանց վերլուծությունը, եզրակացությունները և տեսագործական առաջարկությունները: Սկսվում է ամփոփմամբ, որտեղ տրվում է կապը հետազոտության նպատակին, հետազոտական հարցին, մեթոդաբանությանը: Հաջորդիվ ներկայացվում են եզրակացությունները՝ հիմնված տվյալների վրա, ուղղված հետազոտական հարցի լուծմանը: Քննարկման բաժինը խորությամբ վերլուծում է արդյունքները՝ կապելով դրանք տեսական հիմքերի և նախորդ ուսումնասիրությունների հետ, ներկայացնում է ոչ սպասելի արդյունքները, սահմանափակումները և դրանց հնարավոր բացատրությունները՝ ապահովելով քննադատական վերլուծություն: Վերջում առաջարկությունների բաժնում ներկայացվում են արդյունքների և եզրակացությունների հիման վրա գործնական առաջարկություններ՝ ուղղված պրակտիկ մասնագետներին, քաղաքականություն մշակողներին կամ այլ հետազոտողներին: Առաջարկությունները պետք է լինեն իրագործելի, հիմնավոր և հստակորեն արդարացված հետազոտության արդյունքներով: Գլուխը եզրափակվում է անդրադարձով,</p>	<p>500–700 բառ</p>

	<p>որտեղ նկարագրվում է հետազոտության ընդհանուր ներդրումը, սահմանափակումները և արդյունքների հնարավոր ազդեցությունը:</p>	
<p style="text-align: center;"><b>ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ</b></p>	<p>ԱՀՄ 7 (APA 7) ձևաչափով հղումների ցանկը ներկայացնում է հետազոտության մեջ օգտագործված բոլոր աղբյուրների կազմակերպված թվարկումը: Հղումները դասավորվում են այբբենական կարգով՝ առաջին հեղինակի ազգանվան հիման վրա: Հեղինակների անունները նշվում են աղբյուրում ներկայացված հերթականությամբ, ընդ որում, մինչև 20 հեղինակները պետք է նշվեն ամբողջությամբ, իսկ 21-ից ավելիի դեպքում՝ առաջին 19-ը, հետո՝ երեք կետ (...), և վերջին հեղինակի անունը: Գրքերի, ամսագրերի և հաշվետվությունների վերնագրերը գրում են շեղատառով (<i>italicized</i>), մինչդեռ հոդվածների կամ գլուխների վերնագրերը չեն շեղվում: Վերնագրերի մեջ մեծատառով են գրվում միայն առաջին բառը, ենթավերնագրի առաջին բառը և հատուկ անունները, բացառությամբ ամսագրերի վերնագրերի, որտեղ բոլոր հիմնական բառերը գրվում են մեծատառով: Օրինակ, գրքերի համար նշվում է հեղինակի ազգանունը, անվան սկզբնատառերը, տարեթիվը, վերնագիրը և հրատարակչի անունը. (օր.՝ Smith, J. A. (2020). <i>Understanding research methods: A practical guide</i>. Academic Press): Հոդվածների համար ավելացվում է ամսագրի վերնագիրը, հատորը, թողարկումը, էջերի համարները և DOI հասցեն, եթե կա. (օր.՝ Brown, T. R., &amp; Green, S. P. (2021). <i>Advances in network security</i>. <i>Journal of Information Security</i>, 45(3), 123–134. <a href="https://doi.org/10.1234/jis.2021.04503">https://doi.org/10.1234/jis.2021.04503</a>): Վերկայքերի համար նշվում է հեղինակի անունը կամ կազմակերպության անվանումը, տարեթիվը, էջի վերնագիրը, կայքի</p>	

	անունը և հղումը. (օր.՝ American Psychological Association. (2021). Առավել մանրամասն՝ <a href="https://www.apa.org/style">https://www.apa.org/style</a> :	
<p align="center"><b><u>ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ</u></b>  <b>Հավելված 1.</b>  <b>Հավելված 2.</b>  <b>Հավելված 3.</b></p>	<p>Հավելվածներում ներկայացվում են մեթոդիկաները, դիագրամները, գծագրերը, աղյուսակները, լուսանկարներ, պատկերներ, գործնական/մեթոդական աշխատանքի նյութերը, նորմատիվ-իրավական ակտերի համապատասխան հատվածները: Պարտադիր է, որպեսզի տեքստում բոլոր հավելվածների վերաբերյալ կատարվեն վկայակոչումներ «համաձայն հավելված 1-ի» արտահայտությամբ:</p>	

## VI. ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

16. Ավարտական աշխատանքը հրապարակային պաշտպանության է ներկայացվում համակարգչային շարվածքով՝ տպագիր, կազմված թղթային և էլեկտրոնային տարբերակներով (\*.docx կամ \*.pdf), սույն կարգի կետ 15-ի աղյուսակ 1-ում ներկայացված ծավալով, օղակներով կազմված թղթային և էլեկտրոնային տարբերակներով: Թղթի չափսը՝ A4, լուսանցքները՝ ձախից 3 սմ, 1.5 աջից, վերևից և ներքևից՝ 2 սմ: Տեքստը մուտքագրվում է Unicode կոդավորման համակարգի GHEA Grapalat կամ Sylfaen տառատեսակի կիրառմամբ: Վերնագրերը և տեքստը գրվում են 12 տառաչափով, միջտողային հեռավորությունը՝ 1.5: Գլուխների վերնագրերը գրվում են թավ (bold), էջի առաջին տողում, մեջտեղում և գլխատառերով: Յուրաքանչյուր գլուխ, ինչպես նաև «ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ», «ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ ԵՎ ԲԱՆԱԼԻ ԲԱՌԵՐ ՈՒ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ», «ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ԽՈՍՔ», «ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ», «ԱՄՓՈՓՈՒՄ, ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՔՆՆԱՐԿՈՒՄ ԵՎ ԱՌԱԶԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ», «ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ», «ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ» բաժինները, սկսվում են նոր էջից: Ենթագլուխների վերնագրերը գրվում են թավ (bold), մեջտեղում, փոքրատառերով, ոչ նոր էջից: Պարբերությունները սկսվում են նոր տողից՝ 1սմ խորքից: Աշխատանքի բոլոր էջերը, ներառյալ հավելվածները, համարակալվում են ներքևում: Համարակալումը սկսվում է առաջին էջից՝ տիտղոսաթերթից, որի վրա էջի համարը՝ 1-ը, չի դրվում:

16.1. Արվեստի ուղղությամբ կրթական ծրագրերի (011401.13.6-Երաժշտական կրթություն, 011401.11.6-Կերպարվեստ, 021201.03.06-Հագուստի մոդելավորում, 11401.14.6-

Պարարվեստ, 021503.02.6-Ռեժիսուրա, 021101.01.6-Գեղարվեստական լուսանկարչություն, 021101.02.6-Օպերատորություն, 021401.01.06-Դեկորատիվ կիրառական արվեստ, 021502.01.06-Գործիքային կատարողականություն) պարագայում մասնագիտական ամբիոնների որոշմամբ կարող են սահմանվել կառուցվածքի, ծավալի որոշակի առանձնահատկություններ՝ ոչ ավելի, քան սահմանված կարգի պահանջների 70%-ի չափով:

16.2. Արվեստի ուղղվածությամբ մասնագիտական կրթական ծրագրերի (տես՝ կետ 16.1.) դեպքում ավարտական աշխատանքի 70%-ը կարող է կազմել արվեստի կոնկրետ ճյուղի կատարողական բաղադրիչը, որի կատարման չափանիշներն ու ներկայացման ձևաչափն ըստ մասնագիտական ուղղվածության սահմանում է մասնագիտական ամբիոնը:

17. Ավարտական աշխատանքում առկա աղյուսակները, նկարներն ու գծապատկերները համարակալվում են և դրանց տրվում են անվանումներ: Համարակալումները դրվում են վերջիններիս անմիջապես վերևում, աջ կողմում՝ 12 տառաչափով: Օրինակ՝ Աղյուսակ 1, Նկար 1, Գծապատկեր 1, որոնցից յուրաքանչյուր տեսակի համար կատարվում է առանձին համարակալում: Նկարների, աղյուսակների, գծապատկերների անվանումները, նշանակումների բացատրությունները գրվում են անմիջապես դրանց ներքևում, առանց տող բաց թողնելու, մեջտեղում՝ 10 տառաչափով, փոքրատառերով:

18. Հավելվածների համարակալումը գրվում է նոր էջի առաջին տողի աջ անկյունում՝ 12 տառաչափով, bold-ով, փոքրատառերով: Օրինակ՝ Հավելված 1, որից երկու տող ներքև, մեջտեղում, փոքրատառերով՝ 12 տառատեսակով, գրվում է հավելվածի վերնագիրը:

19. Ավարտական աշխատանքի տեքստում հղումներն իրականացվում են APA հղումներ համակարգով <https://apastyle.apa.org/> (Հավելված 5):

## **VII. ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՊԼԱՆ-ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

20. Ավարտական աշխատանքի պատրաստման աշխատանքներն իրականացվում են ըստ պլան-ժամանակացույցի օրինակելի ձևի, որը և՛ առկա (8 կիսամյակ), և՛ հեռակա (10 կիսամյակ) համակարգերի համար ներկայացված է Հավելված 4-ում:

## **VIII. ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

21. Ավարտական աշխատանք պատրաստող ուսանողին հրապարակային պաշտպանությանը նախապատրաստելու և աշխատանքի վերաբերյալ վերջնական դիտարկումներ ու առաջարկություններ կատարելու նպատակով պաշտպանությունից

առնվազն 3 շաբաթ առաջ ամբիոնը կազմակերպում է ավարտական աշխատանքի նախապաշտպանություն՝ կազմելով հանձնաժողով ամբիոնի վարիչի, ուսանողի ղեկավարի և ամբիոնի այլ մասնագետների մասնակցությամբ:

22.Նախապաշտպանության ընթացքում հանձնաժողովը ուսումնասիրում է ավարտական աշխատանքը, լսում է ուսանողի ելույթը հիմնախնդրին վերաբերող գրականության վերլուծության, կատարված հետազոտության, ստացված արդյունքների, դրանց հիման վրա կատարված եզրակացությունների վերաբերյալ: Հանձնաժողովը կատարում է դիտարկումներ առկա խնդիրների վերաբերյալ և անհրաժեշտության դեպքում ժամանակ տալիս դրանց շտկման համար:

23.Հանձնաժողովը քննարկում է ավարտական աշխատանքը, ղեկավարի կարծիքը և ուսանողի ներկայացման արդյունքում կայացնում է հետևյալ որոշումներից որևէ մեկը.

23.1.ավարտական աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության,

23.2.ժամանակ տրամադրել ուսանողին ավարտական աշխատանքի մեջ առկա խնդիրները շտկելու համար՝ նշելով վերափոխված տարբերակը ամբիոն ներկայացնելու վերջնաժամկետը (առավելագույնը 10 օր),

23.2.1. վերափոխված տարբերակը ամբիոն ներկայացնելուց հետո հանձնաժողովը ևս մեկ անգամ անդրադառնում է հարցին և կայացնում սույն կարգի 23.1 և 23.3 ենթակետերում նշված որոշումներից մեկը,

23.3.ավարտական աշխատանքը չերաշխավորել հրապարակային պաշտպանության (հանձնաժողովը կազմում է որոշման վերաբերյալ արձանագրություն՝ հիմնավորելով պատճառները): **Այս դեպքում սովորողը չի կարող մասնակցել հրապարակային պաշտպանության:**

24.Ամբիոնը կազմակերպում է ավարտական աշխատանքի գրախոսումը: Ավարտական աշխատանքի գրախոսումը կարող են իրականացնել ՀՊՄՀ-ի և այլ բուհերի, ինչպես նաև արտադրության, գիտական հիմնարկների և այլ հաստատությունների համապատասխան գիտական աստիճան ունեցող մասնագետները:

25.Գրախոսը սահմանված ժամկետում՝ գրախոսման համար ավարտական աշխատանքը ստանալուց հետո առավելագույնը 7 օրվա ընթացքում իր կարծիքը (Հավելված 2) ներկայացնում է ամբիոն:

26.Ավարտական աշխատանքի պաշտպանությանը երաշխավորված, բայց չներկայացած կամ ներկայացած և «անբավարար» գնահատված ուսանողը կարող է պաշտպանել ավարտական աշխատանքը (նոր կամ նախկինում հաստատված թեմայով) հաջորդ ուսումնական տարիներին:

27. Ավարտական աշխատանքի հրապարակային պաշտպանությունը ձայնագրվում է և պահպանվում՝ ըստ գործող կարգի:

28. Ավարտական աշխատանքի հրապարակային պաշտպանությունն իրականացվում է համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի 2017 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 1282-Ն հրամանով հաստատված «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման» կարգի դրույթների:

**IX. ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ**

29. Ավարտական աշխատանքի գնահատումն իրականացվում է 100 միավորանոց սանդղակով՝ համաձայն ՀՊՄՀ-ի ուսանողների գիտելիքների ստուգման ու գնահատման համակարգի, Աղյուսակ 2-ում ներկայացված բաղադրիչներով, բացառությամբ սույն կարգի կետ 16.1-ում նշված արվեստի ուղղվածությամբ մասնագիտական կրթական ծրագրերի, որոնց դեպքում 70% գնահատման կշիռ բաժին է ընկնում արվեստի կոնկրետ ճյուղի կատարողական բաղադրիչին (որի գնահատման չափանիշներն ըստ մասնագիտական ուղղվածության սահմանում է մասնագիտական ամբիոնը):

Աղյուսակ 2.

<b>ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ</b>	<b>ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿՇԻՌ (ՄԱՍՆԱԲԱԺԻՆ)</b>	<b>ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ</b>
Թեմայի/հիմնախնդրի արդիականության հիմնավորումը	10%	Հիմնախնդրի հստակ ձևակերպում, արդիականության հիմնավորում, կարևորության ներկայացում և հետազոտության նպատակների հստակ նկարագրություն:
Գրականության վերլուծությունը	15%	Տեսական հիմքերի, գրականության վերլուծության խորություն, համապատասխան աղբյուրների ընտրություն և դրանց կապը հետազոտական հարցի հետ:
Հետազոտության իրականացումն ու արդյունքները	20%	Հետազոտական մեթոդների հիմնավորում, տվյալների հավաքագրման և վերլուծության ճշգրտություն, արդյունքների ներկայացման

		հստակություն՝ աղյուսակներով և գծագրերով:
Ավարտական աշխատանքի շարադրանքը և ձևավորումը	5%	Աշխատանքի կառուցվածքային ամբողջականություն, ԱՀԱ (APA) 7 ձևաչափի համապատասխանություն, լեզվական և ոճական հստակություն, համապատասխան հավելվածների առկայություն:
Ավարտական աշխատանքի ներկայացումը պաշտպանությանը	50%	Աշխատանքի արդյունավետ ներկայացում պաշտպանությանը, հարցերին պատասխանելու կարողություն, ժամանակի ճիշտ կառավարում և ներկայացման ընդհանուր տպավորություն

30. Ավարտական աշխատանքի գնահատականը ենթակա է բողոքարկման ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կողմից ընթացակարգային խախտումների առկայության և դրանց արձանագրման դեպքում:

31. Ավարտական աշխատանքի գնահատման արդյունքները հայտարարվում են պաշտպանության օրը: Գնահատականի հրապարակումից հետո մեկ ժամվա ընթացքում ուսանողն ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահին կարող է ներկայացնել գրավոր բողոք, որը քննարկվում է նույն օրը բողոքարկման հանձնաժողովի հետ համատեղ նիստում:

32. Ուսանողի ներկայությամբ բողոքարկման հանձնաժողովը, միանալով ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովին, լսում է պաշտպանության ձայնագրությունն ու հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ կայացնում հետևյալ որոշումներից մեկը՝

32.1. գնահատականը թողնել անփոփոխ,

32.2. գնահատականը բարձրացնել:

33. Հանձնաժողովի քարտուղարը կայացված որոշման վերաբերյալ կազմում է համապատասխան արձանագրություն, որը ստորագրում են երկու հանձնաժողովների բոլոր ներկա անդամները:

34. Բողոքարկումից հետո ամրագրված գնահատականը փոփոխման ենթակա չէ:

## X. ԵԶՐԱՓՈՒԿ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

35. Սույն կարգը տարածվում է 2025-2026 ուսումնական տարում և դրանից հետո բակալավրի ավարտական կուրսերում ուսումնառող ուսանողների վրա:

**Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ՖԱԿՈՒԼՏԵՏ**

**ԱՄԲԻՈՆ**

**ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ**

**Ուսանողի ազգանուն, անուն, հայրանուն**

**Թեման**

Ներկայացված է բակալավրի որակավորման հայցմանը

«\_\_\_\_\_ (գրվում է դասիչը)» մասնագիտությամբ

Ղեկավար՝ \_\_\_\_\_

ստորագրություն

գիտական աստիճան, կոչում, ազգանուն, անուն

«Թույլատրվում է պաշտպանության»

Ամբիոնի վարիչ՝ \_\_\_\_\_

ստորագրություն

գիտական աստիճան, կոչում, ազգանուն, անուն

**ԳՐԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ  
ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ուսանող \_\_\_\_\_

անուն, ազգանուն, հայրանուն

Մասնագիտական կրթական ծրագիր \_\_\_\_\_

Ամբիոն \_\_\_\_\_

Ավարտական աշխատանքի թեմա \_\_\_\_\_

**1. Թեմայի համապատասխանությունը ՄԿԾ-ին և ՈԱՇ-ի 6-րդ մակարդակին**

\_\_\_\_\_

**2. Թեմայի արդիականության հիմնավորումը, հիմնախնդրի սահմանումը**

\_\_\_\_\_

**3. Գրականության վերլուծությունը**

\_\_\_\_\_

**4. Տվյալների հավաքագրումը, վերլուծությունը, արդյունքների մշակվածությունը, եզրակացությունների, առաջարկությունների ինքնուրույնությունը**

\_\_\_\_\_

**5. Դիտողություններ ավարտական աշխատանքի վերաբերյալ**

\_\_\_\_\_

**6. Եզրակացություն (կատարվում է նշում համապատասխան վանդակում)**

Բավարարում է ավարտական աշխատանքին ներկայացվող պահանջներին

Չի բավարարում ավարտական աշխատանքին ներկայացվող պահանջներին

ԳՐԱԽՈՍ՝ \_\_\_\_\_

ստորագրություն

գիտական աստիճան, կոչում, ազգանուն, անուն

« \_\_\_\_\_ » 20\_\_թ.

Հավելված 3.

**ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՐԾԻՔ  
ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ**

Ուսանող \_\_\_\_\_

անուն, ազգանուն, հայրանուն

Մասնագիտական կրթական ծրագիր \_\_\_\_\_

Ամբիոն \_\_\_\_\_

Ավարտական աշխատանքի թեմա \_\_\_\_\_

1. Ավարտական աշխատանքի ձևավորման համապատասխանությունը սույն կարգի պահանջներին

\_\_\_\_\_

2. Ավարտական աշխատանքի արդիականությունը, հիմնախնդրի սահմանումը

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

3. Ուսանողի ինքնուրույնությունը, տվյալներ հավաքագրելու, դրանք, վերլուծելու, եզրակացություններ կատարելու կարողությունները

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

4. Ավարտական աշխատանքի ուժեղ և թույլ կողմերը

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

**Եզրակացություն** (կատարվում է նշում համապատասխան վանդակում)

Բավարարում է ավարտական աշխատանքին ներկայացվող պահանջներին

Չի բավարարում ավարտական աշխատանքին ներկայացվող պահանջներին

ՂԵԿԱՎԱՐ՝ \_\_\_\_\_

ստորագրություն

\_\_\_\_\_

գիտական աստիճան, կոչում, ազգանուն, անուն

« \_\_\_\_\_ » 20\_\_թ.

**ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՊԼԱՆ-ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻ  
ՕՐԻՆԱԿԵԼԻ ԶԵՎ ԱՌԿԱ (8 ԿԻՍԱՄՅԱԿ) ԵՎ ՀԵՌԱԿԱ (10 ԿԻՍԱՄՅԱԿ)**

**ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀԱՄԱՐ**

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ	ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏ	
	ԱՌԿԱ 8 կիսամյակ	ՀԵՌԱԿԱ 10 կիսամյակ
Ավարտական աշխատանքի թեմայի և ղեկավարի ընտրություն, հաստատում ամբիոնում	7-րդ կիսամյակի մինչև 1-ին ամսվա վերջ	9-րդ կիսամյակի մինչև 2-րդ ամսվա վերջ
Ավարտական աշխատանքի թեմայի և ղեկավարի հաստատում ֆակուլտետի խորհրդում	7-րդ կիսամյակի մինչև 3-րդ ամսվա վերջ	9-րդ կիսամյակի մինչև 3-րդ ամսվա վերջ
Ավարտական աշխատանքի կատարման աշխատանքային պլան-ժամանակացույցի կազմում	7-րդ կիսամյակի մինչև 3-րդ ամսվա վերջ	9-րդ կիսամյակի մինչև 3-րդ ամսվա վերջ
Ավարտական աշխատանքի թեմային վերաբերող գրականության ցանկի կազմում և հստակեցում ղեկավարի հետ	7-րդ կիսամյակի մինչև 4-րդ ամսվա վերջ	9-րդ կիսամյակի մինչև 4-րդ ամսվա վերջ
Թեմայի արդիականության հիմնավորում, նպատակի, հիմնախնդրի սահմանում	8-րդ կիսամյակի 1-ին ամսվա վերջ	10-րդ կիսամյակի 1-ին ամսվա վերջ
Գրականության վերլուծություն, մշակում, հետազոտվող հիմնախնդրի ժամանակակից վիճակի նկարագրություն, սեփական հետազոտության սահմաններում մշակված նյութի կիրառելիության գնահատում	8-րդ կիսամյակի 1-ին ամսվա վերջ	10-րդ կիսամյակի 1-ին ամսվա վերջ
Տվյալների հավաքագրում. հետազոտության մեթոդների, մեթոդիկաների, ընտրանքի, վայրի, ընտրություն, հետազոտության բուն իրականացում	8-րդ կիսամյակի 2-րդ ամսվա վերջ	10-րդ կիսամյակի 2-րդ ամսվա վերջ
Տվյալների վերլուծություն, դրանց հիման վրա եզրակացությունների, դրանց գործնականում կիրառության վերաբերյալ առաջարկությունների ձևակերպում, աշխատանքի ամփոփում	8-րդ կիսամյակի 3-4-րդ ամիսներ	10-րդ կիսամյակի 3-4-րդ ամիսներ
Ավարտական աշխատանքի ներկայացում ղեկավարին և ամբիոն	8-րդ կիսամյակի 4-րդ ամիս, պաշտպանությունից 1 ամիս առաջ	10-րդ կիսամյակի 4-րդ ամիս, պաշտպանությունից 1 ամիս առաջ

## ԱՀԱ (APA) ՀՂՈՒՄՆԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ամերիկյան հոգեբանական ասոցիացիայի (ԱՀԱ) 7-րդ հրատարակությունը լայնորեն կիրառվում է հումանիտար և սոցիալական գիտությունների ոլորտում գիտական աշխատանքների մեջբերման համար: Այս ուղեցույցում կներկայացնենք ինչպես կատարել տեքստում հղումներ և ինչպես կազմել աղբյուրների ցանկը՝ ներառելով նաև արհեստական բանականությամբ գեներացված աղբյուրների հղումները:

### 1. Տեքստում հղումներ

Տեքստում հղումները թույլ են տալիս ընթերցողին իմանալ, թե որտեղից են գալիս տեղեկությունները: ԱՀԱ 7 համակարգում տեքստում հղումները բաղկացած են հեղինակի ազգանունից և հրատարակության տարեթվից:

#### 1.1. Մեկ հեղինակ

- **Օրինակ (հեղինակի ազգանունը նախադասության մեջ):**

Սարգսյանը (2020) նշում է, որ կրթության ոլորտում փոփոխությունները անհրաժեշտ են:

- **Օրինակ (հեղինակի ազգանունը փակագծերում):**

Կրթության ոլորտում փոփոխությունները անհրաժեշտ են (Սարգսյան, 2020):

#### 1.2. Երկու հեղինակ

- **Օրինակ:**

Մատինյանն ու Աբրահամյանը (2019) ուսումնասիրել են տնտեսության զարգացման միտումները:

Տնտեսության զարգացման միտումները ուսումնասիրվել են (Մատինյան & Աբրահամյան, 2019):

#### 1.3. Երեք և ավելի հեղինակներ

- **Առաջին հղման դեպքում բոլոր հեղինակները նշվում են.**

Կարապետյան, Հովհաննիսյան և Պետրոսյան (2018) պարզել են, որ...

- **Հետագա հղումների դեպքում կիրառվում է «և այլք» («et al.»).**

Կարապետյան և այլք (2018) նշում են, որ...

... (Կարապետյան և այլք, 2018):

#### 1.4. Հեղինակ չունեցող աղբյուրներ

- **Օգտագործեք կազմակերպության անունը կամ աշխատության վերնագրի առաջին բառերը:**

Ըստ Կրթության նախարարության (2017) տվյալների...

... (Կրթության նախարարություն, 2017):

#### 1.5. Բազմաթիվ աղբյուրներ միևնույն հղման մեջ

- **Օրինակ:**

Բազմաթիվ ուսումնասիրություններ հաստատում են այս արդյունքները (Սարգսյան, 2020; Մաթևոսյան, 2019; Գրիգորյան, 2018):

#### 1.6. Մեջբերում էջերի համարներով

- **Եթե մեջբերում եք կոնկրետ էջից, նշեք էջի համարը:**

... (Սարգսյան, 2020, էջ 25):

## 2. Աղբյուրների ցանկ (տեղադրվում է թեզի վերջում)

Աղբյուրների ցանկը տրամադրում է ամբողջական տեղեկություն յուրաքանչյուր հղված աղբյուրի մասին, ինչը թույլ է տալիս ընթերցողին գտնել և ստուգել այդ աղբյուրները:

### 2.1. Գիրք

- **Ֆորմատ:**

Հեղինակ, Ա. Ա. (Տարեթիվ): *Գրքի վերնագիր*: Հրատարակիչ:

- **Օրինակ:**

Պետրոսյան, Ա. (2015): *Հայաստանի պատմություն*: Երևանի Համալսարանի Հրատարակչություն:

### 2.2. Հոդված գիտական ամսագրում

- **Ֆորմատ:**

Հեղինակ, Ա. Ա., & Հեղինակ, Բ. Բ. (Տարեթիվ): Հոդվածի վերնագիր: *Ամսագրի անվանումը*, Հատոր(Համար), Էջեր: <https://doi.org/xx.xxx/yyyy>

- **Օրինակ:**

Մանուկյան, Կ., և Գրիգորյան, Ս. (2017): Տեղեկատվական տեխնոլոգիաների

ազդեցությունը կրթության վրա: *Կրթության Գիտություն*, 12(3), 45–60:  
<https://doi.org/10.1234/edu.2017.12.3.45>

### 2.3. Գլխի խմբագրված գրքում

- **Ֆորմատ:**

Հեղինակ, Ա. Ա. (Տարեթիվ): Գլխի վերնագիր: Ե. Խմբագիր (Խմբ.), *Գրքի վերնագիր* (Էջեր): Հրատարակիչ:

- **Օրինակ:**

Արզումանյան, Լ. (2016) : Հայկական լեռնաշխարհի բուսական աշխարհը: Ե. Հովհաննիսյան (Խմբ.), *Հայաստանի բնությունը* (Էջ 55–70): Գիտություն Հրատարակչություն:

### 2.4. Առցանց աղբյուր

- **Ֆորմատ:**

Հեղինակ, Ա. Ա. (Տարեթիվ): Վերնագիր: Վերցված Ամսաթիվ, URL

- **Օրինակ:**

Նալբանդյան, Դ. (2021): Թվայնացման գործընթացները Հայաստանում: Վերցված սեպտեմբերի 15, 2023՝ <http://www.example.com/digitalization-armenia>

### 2.5. Հեղինակ չունեցող աղբյուր

- **Ֆորմատ:**

*Վերնագիր*: (Տարեթիվ): Հրատարակիչ:

- **Օրինակ:**

*Հայաստանի Հանրապետության վիճակագրական տարեգիրք*. (2020): Ազգային վիճակագրական ծառայություն:

## 3. Արհեստական բանականությամբ գեներացված աղբյուրների հղումներ

### 3.1. Տեքստում հղումներ

Երբ մեջբերում եք արհեստական բանականության (օրինակ՝ ChatGPT) կողմից ստեղծված բովանդակությունը, պետք է նշել մոդելի անունը և տարեթիվը:

- **Օրինակ (հեղինակը նախադասության մեջ):**

Ըստ OpenAI-ի ChatGPT մոդելի (2023)...

- **Օրինակ (հեղինակը փակագծերում):**

... (OpenAI, 2023):

### 3.2. Աղբյուրների ցանկում

- **Ֆորմատ:**

Հեղինակային Կազմակերպություն: (Տարեթիվ): Արհեստական բանականության մոդելի անունը [AI լեզվային մոդել]: Վերցված Ամսաթիվ, URL

- **Օրինակ:**

OpenAI: (2023): ChatGPT [AI լեզվային մոդել]: Վերցված հոկտեմբերի 1, 2023`  
<https://chat.openai.com/>

### 3.3. Եթե կոնկրետ պատասխան եք մեջբերում

- **Տեքստում Հղում:**

Ըստ ChatGPT-ի պատասխանի (OpenAI, 2023)...

- **Աղբյուրների ցանկում:**

OpenAI: (2023): ChatGPT-ի պատասխան սեպտեմբերի 30, 2023-ին [AI լեզվային մոդել]: Վերցված` <https://chat.openai.com/>

## 4. Լրացուցիչ նկատառումներ

- **Հեղինակների անունների ձևաչափում:** Միայն առաջին հեղինակի ազգանունից առաջ օգտագործեք «և» կապը:

- **Օրինակ:** Մարտիրոսյան, Ա., Պողոսյան, Բ., և Միմոնյան, Գ.

- **Տարեթվի բացակայության դեպքում:** Եթե տարեթիվը հայտնի չէ, օգտագործեք (առանց տարեթվի) կամ (n.d.) անգլերեն տարբերակում:

- **Օրինակ:** Հարությունյան, Ե. (առանց տարեթվի):

- **Աղբյուրների ցանկի կազմում:** Աղբյուրները դասավորեք այբբենական կարգով` ըստ առաջին հեղինակի ազգանվան:

- **Տողամիջային հեռավորություն:** Աղբյուրների ցանկում օգտագործեք 1,5 տողամիջյան հեռավորություն, և երկրորդ տողից սկսած կիրառեք կախովի ներգործություն (hanging indent):

- **Ակադեմիական էթիկա:** Արհեստական բանականության մոդելներից ստացված տեղեկատվությունը պետք է հստակ կերպով առանձնացվի և հղում արվի, որպեսզի խուսափեք գրագողությունից:

- **Մեջբերման ոճի համապատասխանություն:** Պահպանեք նույն ձևաչափը բոլոր աղբյուրների համար: